Social Security

Եթե թարգմանիչի Պետք Ունեք

Սոցիալական ապահովության հետ կապված խնդիրներում Ձեզ օգնելու նպատակով մենք տրամադրում ենք անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ: Այս թարգմանչական ծառայություններից Դուք կարող եք օգտվել անկախ այն հանգամանքից՝ խոսում եք մեզ հետ հեռախոսո՞վ, թե՞ Սոցիալական ապահովության գրասենյակում:

Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213**: Եթե խոսում եք իսպաներեն, ապա սեղմեք «2», իսկ մյուս բոլոր լեզուների համար սեղմեք «1», մնացեք գծի վրա, և մեր անգլերեն ավտոմատ ձայնագրության ողջ ընթացքում պահպանեք լռություն՝ մինչև մեր ներկայացուցչի պատասխանելը: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ՝ զանգի կապակցությամբ Ձեզ օգնելու համար: Եթե Ձեր խնդիրը հեռախոսով լուծել հնարավոր չէ, ապա մենք Ձեզ ժամադրություն կնշանակենք Սոցիալական ապահովության տեղական գրասենյակում, և կապահովենք Ձեր այցելության ընթացքում թարգմանչի ներկայությունը: